Դ.Սոկոլով «Ճուտը» հեքիաթի քննարկում. «Ճուտը» հեքիաթը կարդալուց հետո

:-

1.. Ի՞նչ մտածեցիր հեքիաթը կարդալուց անմիջապես հետո: - Մտածեցի որ վերջի մասը շատ լավն էր:
2. Ի՞նչ կասես ճտի մասին: - Մտածեցի որ ճտի ձուն շատ մեծ էր:
3. Ինչ-որ բան զարմացրե՞ց քեզ այս հեքիաթում: Եթե՝ այո, ապա՝ ի՞նչը: - Զարմացրեց որ ճուտը ձվի մեջ էր թռնում:
4. Քո կարծիքով՝ ինչի՞ մասին է հեքիաթը: - Ճուտիկի մասին:
5. Ամենահետաքրքիրը ո՞վ էր այս հեքիաթում. Ինչո՞ւ ես այդպես կարծում: - Ամենահետաքրքիրը ճուտիկն էր, որովհետև կարողացավ տարբեր էակներ հավաքել ձվի մեջ:
6. Հեքիաթը նմա՞ն է երկրագնդին: Ինչո՞վ: - Հեքիաթը նման է երկրագնդին, որովհետև կլոր էր՝ ձուն ամենամեծն էր:

Պատրիկ Կոնուեյ
Գեղարվեստի դպրոց-պարտեզ, 3-րդ դասարան

:·

1.Ճուտը իսկական հեքիաթ է:
2.Ճուտիկը ընկերասեր էր, քանի որ բոլորին կանչեց իր մոտ՝ ձվիկի մեջ:
3.Այս հեքիաթում ինձ զարմացրեց այն, որ ձվիկը կարող է թռչել:
4.Հեքիաթը ընկերասեր ճուտիկի մասին էր:
5.Ամենահետաքրքիրը հեքիաթում՝ դա մեծ ականջներով պապիկն էր:
6.Հեքիաթում ձվիկը նման էր երկրագնդի, որովհետև նրա մեջ տեղավորվեցին հեքիաթի բոլոր հերոսները:



Միլենա Գյուլումյան
Գեղարվեստի դպրոց-պարտեզ, 3-րդ դասարան

:·

Ես հեքիաթը կարդալուց հետո հասկացա, որ մենք պետք է լսող լինենք մեր ծնողներին և մեր տատիկ պապիկներին: Պետք չէ ուրախություն փնտրել ուրիշ տեղ: Ես ճտի մասին կասեմ, որ նա չլսող և չարաճճի էր: Նա սիրում էր ճանապարհորդել: Ինձ հեքիաթում զարմացրեց, թե ինչպես էր իր մարմնի մեջ ճուտը տեղավորում ութոտնուկին, հրեշին և ականջ պապին: Ամենա հետաքրքիր պահը, ծերուկի ականջն էր՝ այնքան մեծ էր, որ ականջի ետևում ծերուկը չէր երևում:

Էրիկ Հովհաննիսյան
Գեղարվեստի դպրոց-պարտեզ, 3-րդ դասարան

:·

Ես ճուտը հեքիաթը կարդալուց հետո մտածեցի,որ ճուտը խելացի է: Ճուտը լավ, բարի ճուտիկ է, բայց՝ փոքրիկ: Ինձ շատ հետաքրքիր է, թե ոնց ճուտը մի ձվի մեջ տեղավորեց երեք հոգու: Հեքիաթը ճտի մասին է, որը բոլոր մասերով ծնող էր ման գալիս: Հեքիաթում ամենահետաքրքիր հերոսը՝ Ականջ Պապն էր, որովհետև նա ունի իրենից «բոյով» աղջիկ: Հեքիաթը նման է երկրագնդի, որովհետև ճուտը աշխարհի բոլոր մասերով շրջում էր:



Էլեն Բաբայան
Գեղարվեստի դպորց-պարտեզ, 3-րդ դասարան